

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie مجموعة علوم

ԽՐԱԳՐԱԳԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ԲՈՒՍ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 41

1899 ՅՈՒՆՈՒԱՐ 1

Ամեն տարի համար Տարեկան կանխիկ 30 դանեկան, Վեցամսեայ 26, իսկ եռամսեայ, 13 դանեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ 15 Ֆրանկ: Թղթատարի ծախքը տարազութեան կը վերաբերի: Հասը 40 փարայ: Գաւառներէ բօսքի բուլ ալ կ'ընդունուի 100 դրուցի տեղ 105 դրուց:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ԽՐԱԳՐԱԿԱՆ. — 1899 Ամանորի առթիւ Տարեձօն:

Ղ. ԲՈՒՍ. — Ճարտարարուեստական. Ներկարարութիւնը: Բամպակ. Կտառ:

Մ. ԳԱԼԷՆՏԷՐ. — Բաց նամակ առ Գ. Կիրակոսեան:

ԳԵՂԱՄ Կ. ՌԻՆՃԵԱՆ. — Մանկասցւոց ներկարարութեան չուրջը:

Գ. ՎԱՀՈՒՆԻ. — Գլուցքին չուրջը:

ԵՐԱՔՄ. — Առտնին Տնտեսականք:

ՏԱՆՏԻԿԻՆԸ. — Խոհանոցի Բաժինը:

Տ. ՊՈԶԱՃԵԱՆ. — Դիտար Ազգաց դրամները:

Ազգային լուրեր. — Մահ՝ Վսեմ. Ազարեան ժողէֆ Էֆէնտի:
Թղթակցութիւն, Հանելուկ, Ազդ Էլն.

Հատը 40 փարայ

ՏՊԱԳՐ. ԳՐԻԳՈՐ Պ. ԳԱՅՍԷՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապ. Ալի Ճատտէսի, Թիւ 4

—

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

1. Գտէք չափ մը հեղուկ մարմնի .
2. Կզզի մ'ի Միջերկրականի .
3. Մետաղ մը թանկագին յարգի .
4. Քաղաք մ'ի մէջ Ֆրանսայի .
5. Մի գաւառ ալ սպանիական .
6. Եւ մի քաղաք Ամերիկեան .
7. Լեռ մի բարձր Ասիական .
8. Բանջարեղէն մ'ալ՝ լաւ աղցան :
9. Ծաղիկ յարգի եւ հոտաւէտ .
10. Յ'Ասիական Թուրքիա՝ մի գետ .
11. Պտուղ մ'արդեօք կ'ուզէ՞ «մէտէդ» .
12. Միաւոր թիւ մ'ալ դիր քովէդ .
13. Մարմնոյ մի մասըն գլխաւոր .

Ա՛յ ըսէք ինձ՝ թէ վերջացուր :

Խաչաձեւիս մէն մի տողի .
Առաջին գիրն երբ կարդացուի ,
Պիտ տեսնուի հոն անուն մի՝
Անուանի պատկերհանի :



Թէեւ 19րդ Հանելուկի լուծումը նախորդ թիւերու մէջ հրատարակուած էր, բայց հետեւեալ լուծումը՝ որ Հալէպէն ղրկուած է մեզ, տեղւոյն հեռաւորութիւնը եւ լուծման բացատրական ընտիր եղանակները նկատողութեան առնելով, հրատարակման արժան կը դատենք :

Երկու վանկիս առաջինն է «Հաւ» ,
Որ միշտ ածող(*) մըն է հարկաւ ,
Եւ դէս ու դէն չրջի բոլոր ,
Մերթ ալ խմբով ողոր մայր :
Երկրորդ , վանկս է «կիթ» բայարմատ ,
Որով գեղջուկն արդիւնք տայ շատ .
Զի երբ ունի կով , այծ , մաքի ,
Կթէ զանոնք , կաթովն օգտի :
Թէ վանկերս երկու
Կցես մէկ մէկու ,
Ես կ'ըլլամ «ՀԱԻԿԻԹ» ,
Լուծումն հանելուկիդ .

Առջի վանկիս՝ արդիւնքն հաւուն ,
Քաղցր ու համեղ կեր ամենուն :
Թէպէտ իր մ'եմ ես անկինդան ,
Անշունչ , անձայն , նկրհեմ սակայն .
Վրաս ճերմակ մ'իբր սաւան՝
Մէջս արծաթի , ոսկւոյ նման
Ճերմկուցս ու դեղնուցս կան ,
Որ երբ տաքնան հոգի կ'առնան .

Իմ երկու վանկ
Կ'ըլլայ մէկ յեանք .
Այն է յոյսեակ :

ՄԱՆՆԻԻ Լ. ԱՅԻՄԵԱՆ

Կամոր եղբն է թիւական :

ՏԲԴ. Բ. ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ
ՄԱՆԿԱՐԹԵՐ ԿԵԱՐԹԱԲՈՅԺ , ՄԱՍՆԱԳԷՏ
ԶՂԱՅԻՆ ՀԻԻԱՆԴՈՒԹԵԱՆՑ

Որ իր երկար փորձառութեամբ ծանօթ է , մի քանի տարիէ ի վեր ուսումնասիրութիւններ կատարելէ զկնի ի Բաղիզ , դարձած է մայրաքաղաքս , հաստատելով իր բնակութիւնը Բերա Մէք-թէպ-Պայրամ-Փողոց , թիւ 29 , ուր ամէն օր կէս օրէ վերջ հիւանդ կ'ընդունի : Մասնաւորապէս կ'դարմանէ կնոջական եւ ջղային ամէն հիւանդութիւններ : ԵՇ . նոյն ժամուն ձրի կը դարմանէ կարօտեալները : Ելեքտրաբուժում ամէն ռեւմատիզմով , մասնաւոր քննութիւն Ռէնթգենեան մեքենայով :

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական ու Գիտական

Encyclopédie معجم علوم

ԽՄԲԱԳՐԱԳԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ԲՈՒԱՏ


Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 41

1899 ՅՈՒՆՈՒԱՐ 1

1899

ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻԻ



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ՝ իր այս չրջանին մէջ առաջին անգամն ըլլալով, բարեբաւարիկ առիթը կ'ունենայ, ողջունելու ջերմօրէն իր Ազնիւ Բաժանորդներն, Ընթերցողներն և Համակիրներն, և իր սրտագին բարեմաղթութեանց աւիւնոտ երախայրին մատուցանելու իրենց:

Խարխափումով էր որ նետուեցանք այս ասպարէզին մէջ, սակայն հաստատամտութեամբ ընդգրկեցինք զայն, և հակառակ այնչափ խոչընդոտներու և դժուարութեանց, աննկուն կամքով յաւատեցինք: Լիաթոք չունչ մը կ'առնենք ահա այսօր՝ 99ի Հանգրուանին վերայ, ուրկէ կուգանք մեր անհուն շնորհակալիքը ներկայացնել այն ամէն անձնաւորութեանց, որոնք մեր այս խոնարհ այլ զործնականապէս օգտաւէտ ըլլալու կոչումն ունեցող ձեռնարկը քաջալերելու չի վարանեցան:

Աննպատակ չէր որ արօրը դաշտին՝ կռանը սալին վրայ ձգելով, գրիչ ի ձեռին հրապարակ իջանք: Մեր այս ձեռնարկով հասկցնել կ'ուզենք ժողովուրդին, թէ մեր անտեսական վիճակը բարդաւածելու, և անով մեր գոյութիւնը ապահովելու համար, պէտք է ուժ տանք երկրագործութեան, արհեստները ծաղկեցնենք, վաճառականութիւնը յառաջ տանինք. առանց երկրագործութեան արհեստ չի կայ, և առանց այդ երկուքին՝ վաճառականութիւնը գոյութիւն չունենար. ի մի բան՝ աշխատիլ սովորենք, և աշխատութիւնով կեանքի բնական դառնութիւնները քաղցրացնենք, ծուլութեան ազատութիւնները մեր ճակատի քրտինքով լուանք մաքրենք, մեր ընտանեկան երջանկութիւնը անով ապահովենք. բայց ջանանք մեր աշխատութիւնը արդիւնաւոր ընելու համար Գիտութիւնը մեզի առաջնորդ ընտրել. վասն զի լաւ համողութիւնը որ, հրաշքներու դարը այլևս անցած է անվերադառնալի կերպով, տիեզերքի ճարտար զեկալարը Գիտութիւնն է այսօր, Գիտու-

թիւնը ճշմարտութիւնն է, իրականութեան պատկերն է, անթափանցելիին ճառագայթումն է, Գիտութիւնը նոյն ինքն Ստուաճութեան շունչն է. անսանք ուրեմն անոր, հաւատքով գրկենք զայն, և ամէն ինչ իրմէ սպասենք կեանքի անդորրութեան նկատմամբ:

Ռամիկը սակայն իր նախապաշարումն ունի, մերթ կ'ատէ գիտութիւնը, մերթ կը սոսկայ անկէ, մերթ կը հալածէ զայն, և ի տես անոր հրաշալիքներուն, ապուշ կը կրթի առանց հետամուտ ըլլալու, գերբնական կամ աւելի ստատանայական բան մը փնտռել կը փորձէ անոնց մէջ, և երբեք չուզեր հաւատալ թէ, գիտութիւնը հոն՝ մարդուն մէջ քատակուած (assimilé), իբր հանճար կը փայլի կը ցոլայ, եւ լոյս կը սփռէ ամենուրեք. վասն զի ռամիկը տգիտութեան մարմնացումն է, մարդկութեան մէկ վէրքը, անցեալ սերունդի ճակտին մուրճ՝ և այդ ռամիկը մեր մէջ մեծամասնութիւնը կը կազմէ: Մարդկութիւնը ռամիկով է որ կը տառապի, անով է որ ախտաւորած դոսացած է: Իջնենք ռամիկին խաւար խաւերուն մէջ, գիտութեան ջահը ձեռքերնիս, լոյս սփռենք անոր խաւարամած մտաց առջև, յառաջդիմութեան ճամբան ցոյց տանք իրեն, Գիտութեան արգասաւոր և յուռթի դաշտերուն արտադրած կենսապարզ և հացը ծանօթացնենք իրեն: աղնուացնենք մարդկութեան այդ կարևոր դասը, և մարդկութիւնը չի փճացնենք, հոն՝ դէպի ռամիկութիւն քաշքշելով և ստրկացնելով:

Ամէն սերունդ պարտականութիւն մ'ունի իր յաջորդին հանդէպ. այն է՝ մարդկութեան յառաջդիմութեան հսկայ չէնքին վրայ քար մը դնել, և ինչ որ ոտացած է իր նախորդէն, զայն անգամ մը ևս աղնուացնելով աւելի կատարելագործեալ վիճակի մէջ ժառանգ ու կտակ թողուլ ապագային: Այս է աշխատութեան պահանջկոտ և ամենամեծ և հրաշագործ օրէնքը. մարդկութիւնը՝

որուն մէկ յարրն է Մարդը, պէտք է անդադար աշխատի, միշտ դէպի յառաջդիմութիւն ուղղէ իր քայլերը, եւ կատարելագործէ ինչ որ իրեն աւանդուած է, և այնպէս աւանդէ իր ժառանգորդին: Եւ ասիկա՝ նոյն ինքն առաքինութեան և մարդասիրութեան օրէնքն է: Աշխատութիւն և մարդասիրութիւն. ահա ասիկ ներկայ դարու երկու հզօր շարժիչները, որոնցմով և եթ մարդկութիւնը իր գոյութիւնը կ'ապահովէ, իր գիւրքը կը բարձրացնէ, և կեանքի դառնութիւնները կ'ամօքէ: Ուստի մի՛ զարմանաք երբեք, երբ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ իր սիրտը այս սև դիժերուն տակ դրած, իր գրչով ժողովուրդին՝ ռամիկին տղմուտ խաւերուն խորը թափանցել կը նկրտի՝ իր նմաններուն պէս՝ և անոնց հետ, երկաթէ կամքով, պողպատէ թեւերով, տգիտութեան այդ լայնածաւալ հոսանքին առջև պատ հիւսելու համար:

Աշխատութիւն մ'է, բազմազան տակ և բազմաշարժար, զոր կը մատուցանէ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ կարօտ հասարակութեան՝ առանց իսկ դոյզն արտունջ մը արտաշայտելու, թէ մեր մասնագիտութեան, գաղտնիքը ժողովուրդի տրամադրութեան տակ դնելով, մեր հացը կը զոհենք հանրութեան կամ մարդկութեան յառաջդիմութեան համար: Ընդհակառակը, ուրախ պիտի ըլլանք և մեր աշխատութիւնները յաւէտ վարձատրուած պիտի նկատենք, երբ հաստատապէս գիտնանք թէ, ժողովուրդը ճշմարտապէս կ'օգտուի մեր այս ձեռնարկէն. որու իրական ապացոյցը պիտի ըլլայ անշուշտ մեր թերթի ջերմ ընդունելութիւնը, հետզհետէ բաժանորդաց թիւը շատնալով: Ո՛հ, այն ատեն, Հանրութիւնը իրաւունքով թող վայելէ ՀԱՆՐԱԳԻՏԱԿի աշխատութեանց պտուղը. սռանց իսկ դոյզն կասկածը տաժելով թէ, մեր այս ձեռնարկի տակ, չահամայ

դիտումներ ծածկուած կան. Հազար ան-
գամ ո՛չ:

... Բայց ո՛ւր գացինք. ԾԾ թուականը,
չափ հեռուները տարաւ մեզ, վերադառնալու
սակայն դէպ ի գրութեանս նպատակէտը,
դէպ ի ՅՈՒՆՎԱՐ 1, Ամանորը՝ որ ընդհանու-
րին համար խնդակցութեան օր մ'է. թո-
ղունք ուրիշները, բայց չե՞մի որ մենք ալ
Մայրաքաղաքէս սկսեալ, մինչև գաւառները,
գիւղերը, մինչև յետին հիւղակը միւսնոյն
նպատակով կը տօնենք այդ վերածնած օրը,
որու մէջէն կեանքի ամբողջ բանաստեղծու-
թիւնը կ'արտացոլէ: Պօլիս՝ ի միջի այլոց,
արտասովոր ոգեւորութիւն մը վերգեցած,
փողոցները ամէն օրուրէն աւելի բազմամարդ,
կառքեր, ձիեր՝ չտապուս արագութիւնով փո-
ղոցէ փողոց կը ուռնան, ամեն ոք ոտքի վրայ
է, կերթան, կուգան. մէկզմէկ կը շնորհա-
ւորեն, Նորածին տարւոյն համար ուխտեր,
բարեմաղթութիւններ կ'ընեն, այցեքարտեր
կը փոխանակեն. մինչդեռ հագիւ կը յիշեն
ակնարկ մի ձգել անցելոյն վրայ:

Մրգավաճառներ ամէն իրենց կրպակ-
ները գեղազարդած են հազար տեսակ
մրգեղէններով, չոր ու թաց: Հասկա սա Պօն-
Մարշէն, Պազար Ալմանը՝ խաղալիքներու,
պատկերներու ճշմարիտ ցուցահանդէսներ
դարձուցած են իրենց վաճառանոցները, ուր
հանճարը, գիտութիւնը ու արհեստը իրենց
ամենէն հրաշակերպ, հոյակապ և ապշեցու-
ցիչ ճարտարութիւններով կը փայլին:

Իպրոցական տղաներ, մեծ ու պզտիկ,
վազնիվազ դպրոց կը դիմեն, և ուսուցիչներու
ձեռքին մէջ իրենց նուէրը սահեցնելով,
պատկեր մը կամ գիրք մը խրատ ուրախ զը-
ւարթ տուն կը դառնան. ուր՝ իրենց հայրի-
կը, մայրիկը, կամ հօրեղբայրը, մօրեղբայրը,
ո՞վ գիտէ ինչ խաղալիքներու, պուպրիկնե-
րու անակնկալներ պատրաստած էին նախորդ
իրիկունէ. ... չունեցողներ ալ կան անշուշտ:

Կրնա՞նք ըսել թէ՛ ուրախակցութեան ընդ-
հանուր օր մը չէ Ամանորը, որու անհամբեր
սրտհատումներով կ'սպասեն, սիրակցարդ ա-
մուներ, իրենց սրտի հատորիկէն յիշատակ մը
ստանալու համար, յիշատակ մը ամբողջ
կեանքով լեցուն:

Ընտանեաց անդամներ ամբողջ վերար

կ'ողջագուրեն, և երբ Հին տարին կերթայ
յաւիտենականութեան մէջ ամիսիւնելու,
ի տես Նորին՝ երկար տարիներ կը մաղթեն ի-
րարու:

Եւ սակայն գիտէ՞ք թէ, նոր տարին ա-
ւելի խնդակցութեան օր մ'է մրգավաճառ-
ներու, խաղալիք ծախողներու, այցեքարտ
չխնդներու, որոնք աւելի անհամբերութեամբ
կ'սպասեն իր գալատեան:

Նուիրատուութիւնը ընկերական օրէնք մը
դարձած է նոր տարւոյ առթիւ, առանց սա-
կայն օրինագրքի մը մէկ յօդուածը կազմե-
լու. և կըսուի թէ առաջին անգամ Հռոմա-
յեցոց մէջ հաստատուած է այս սովորութիւն,
Հռոմայեցոց առաջին թագաւորի օրով. որու
նուիրուած է իբրեւ խաղաղութեան բարե-
գուշակ նշան, Զօրութեան չաստուածուհոյն
(Strenua ուրկէ՝ Etrusca = նուէր) նուիրուած
անտառէ մը կտրուած արմաւենիի ճիւղեր:
Հռոմ այդ օրը սրբագործեց և նուիրեց Յա-
նոս չաստուածոյն, որ կը ներկայացնեն կրկնակ
դէմքով, որոց միով կը դիտէ անցեալը, իսկ
միւսով՝ ապառնին. և որու ի յիշատակ, տա-
րուան առաջին ամիսը կը կոչուի Յունվար,
իբր ամիս խաղաղութեան: Հռոմայեցիք այլ
ևս սովորութիւն ըրին այդ օրը նուիրատու-
ութիւններ ընելու, և իրենց նուէրներն
էին թուգ, արմաւ և մեղր, որ կը նշանակէր
քաղցը և հաճոյալի կեանք բարեմաղթել: Ե-
թէ մէկը պատրիկի մը, ոստանիկի մը պաշտ-
պանութիւնը խնդրէր նոր տարւոյ առթիւ,
վերոյիշեալ նուէրներուն կը կցէր մէկ քանի
ոսկի դրամներ:

Այս սովորութիւնները Հռոմայեցիներէն
տարածուեցաւ իրենց հպատակ ազգերուն,
որ այսօր ամբողջ աշխարհ գրեթէ կը յիշա-
տակէ և կը տօնէ:

* *

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ՝ Հուսկ իր ջերմագին բարե-
մաղթութեանց և շնորհաւորութեանց ան-
կեղծ հաւաստին անգամ մ'ևս կը ներկայէ
ԾԾ ի այս Ամանորի առթիւ, բոլոր Ազգ. Վար-
չական մարմիններու, Վաստակաւորներու,
առ հասարակ իր Պաշտօնակիցներու, Աշխա-
տակիցներու, Թղթակիցներու, Գործակալնե-
րու, իր Աջակից-Բարեկամներու, Համակիր-
ներու, Բաժանորդներու և Ընթերցողներու:

ԽՄ ԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՆԵՐԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԲԱՄՊԱԿԻ ՎՐԱՅ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԱԶԴԱԿՆԵՐՈՒ
ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

(Շարունակ. ԳԻՏ 40)

ԿԻՐԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ. — Կրաջուրը (քիրէճ սույր) մինչև իսկ եռացման ատորձանին մէջ, գրեթէ ազդեցութիւն չունենար բամպակին վրայ, պայմանաւ որ, այս վերջինը ամբողջովին խառնուրդին մէջ ընկղմած ըլլայ, և իրմէ ու է մաս մը օդի ազդեցութեան չենթարկի. բայց միևնոյն ատեն եթէ ջուրի շոգիի ազդեցութեան ենթարկուած ըլլայ, թելերը օքսիտանալով, կը տկարանայ: Ուստի՝ ճերմկցնելու գործողութեան մէջ աշտարակութիւն ընելու է որ շոգիի և օդի ազդեցութեան չենթարկի:

Բլորի և կիրի քլորուկի (քիրէճ գայմաղը, քլորիւռ տը չօ) ազդեցութիւնը. — Եթէ բամպակը խոնաւ վիճակի մէջ կապոյտ քլորի ազդեցութեան տակ դրուի, անմիջապէս կը տըկարանայ, և աւելի շուտով՝ եթէ միևնոյն ատեն արեւու լոյսին ներգործութիւնը կրէ: Կիրի քլորուկի լուծուածքներու մէջ, նոյնպէս բամպակը շուտով կը տկարանայ, լուծուածքին խտութեան, բարեխառնութեան ատորձանին, և գործողութեան տեւողութեան համեմատ: Կիրի քլորուկի խիստ թեթեւ լուծուածքի մը մէջ անգամ բամպակը կը տկարանայ, երբ այդ լուծուածքին մէջ եռացուի: Բայց պաղ վիճակի մէջ, ազդեցութիւնը աննշան կը մնայ: Եթէ լաթի կտոր մը կիրի քլորուկի լուծուածքի (1,025 տեսակարար ծանրութեամբ) մէջ թաթխենք, և մէկ ժամու չափ բաց օդին թողելէ վերջը լուանք, հանքածուխի խայծղանէն պատրաստուած հիմնաղային (basique) գոյներու հետ կը միանայ բուրդի պէս: Այս նշանաւոր յատկաթիտութիւնը յառաջ կու գայ, ենթաքլորային թթուի (առիտ իրօքլորէօ) ազդեցութեան տակ, որ օդը կը ցնդի, օդին մէջ գտնուած բնածխական թթուի (առիտ քառ-

պօնիք) ազդեցութեան տակ: Բամպակը այսպէս օքսիտանալով կը կազմաւորուի օքսիտացեալ խորշանիւթի: Եւ ինչպէս տեսանք, բամպակը իր այս վիճակին մէջ սերտ յարակցութիւն մ'ունի հանքածուխի խայծղանէն ելած գոյներուն:

ՄԵՏԱՂԱՅԻՆ ԱՂԵՐՈՒ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ.

— Սովորական աղերու մէջ, չեզոք աղերու լուծուածքները, բամպակի վրայ ո'ւ է ազդեցութիւն չունին. իսկ թթու աղերը՝ իրենց բաղադրութեան մէջ մտնող թթուներու ազդեցութիւնը ունին, որոնց վրայ արդէն խօսեցանք: Հողային եւ ծանր մետաղական աղերու լուծուածքի մէջ եթէ բամպակը թաթխուի, չորցուի և յետոյ տաքցուի, կամ ջրաշոգիի ազդեցութեան ենթարկուի, աղը անմիջական կերպով կը բազալուծուի, և այս պարագային, եթէ աղը հիմնական կազմութիւն մ'ունի, թելերուն վրայ կը նստի, և իր կազմութեան մէջ մտնող թթուն ալ ազատ մնալով, կ'սկսի թելերը թաթարել (փտեցնել), այնչափ շուտ և ուժգնօրէն, որչափ գործածուած լուծուածքը խիտ և զօրաւոր է: Բամպակեայ պատտառներու տպածոները (պատմա) շոգիով ներկելու դրութիւնը վերայիցեալ երեւոյթներուն վրայ հիմնուած է, զորս պիտի տեսնենք իրենց կարգին:

ՆԵՐԿԵՐՈՒ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ. — Բացի լեղակէ (չիլիա), քրքումէ (հինտ գաֆրանը) և կնդրիտային (պանզիտին, սրուեստական ներկերու մէկ տեսակը, զորս պիտի տեսնենք իրենց կարգին) ներկերէ, ինչպէս և մէկ քանի ուրիշներէ, մնացեալ բոլոր ներկատու նիւթերը ուղղակի կերպով բամպակի թելերուն վրայ չեն հաստատուիր. ահա այս պատճառաւ ներկելէ առաջ, բամպակեայ թելերը կամ հիւստածքները նախնական գործողութեան մը կ'ենթարկեն, որու մէջ գործածուած նիւթերը կը ծառայեն, ներկատու նիւթերը բամպակի թելերուն վրայ հաստատել տալու. այս գործողութեան կ'ըսեն ներկամածել (mordancer), որու վրայ ևս պիտի խօսինք իր կարգին:

ԿՏԱԻ

Կտաւը՝ գործածական կտաւատ կոչուած տունկի ներքին կեղեւէն յառաջ եկած թելերն են:

Այս տունը կը բուսնի և կը մշակուի գը-
րեթէ աշխարհիս մեծ մասին մէջ: Կտաւի
թելերը աղէկ և դիմացկուն ըլլալու համար,
կատարեւապէս հասունանալէն առաջ կը հըն-
ձեն, այսինքն՝ երբ տունկին վարի մասը (եր-
կու երրորդը գրեթէ) դեղնիլ սկսի: Այդ մի-
ջոցին տունկերը արմատախիլ կ'ընեն, խուրձ
խուրձ քաշել հանելով հողէն: Հունտերը կը
զատեն, որու համար կը գործածեն մասնա-
ւոր գործիք մը, որ ուրիշ բան չէ, բայց ե-
թէ երկայնածիղ երկաթէ ակռաներով սանտր
մը, որ հաստատուած է տախտակի մը վրայ,
և դէմ առ դէմ երկու հոգի նստելով, կտա-
ւատի խուրձերը հետզհետէ կ'առնեն և փոխ
ի փոխ սանտրէն կ'անցունեն: Եթէ կտաւա-
տը չորցնելով ամբարեն, Եւրոպայի մէջ կամ-
նաւով (հաւման կամ տիւզէն մաքինաւոր =
batterie) կը կանեն, և ուրիշ տեղեր թակով
(թօքմագ) և լն: Կտաւատը երբ նօսր (սէյրէկ)
ցանուի, թելերը հաստ կ'ըլլան, և որչափ հոծ
(սըխ) ցանուի, այնչափ հաւապար և նուրբ
կ'ըլլան իր թելերը: Նախորդ սլարագային
հունտ չափ կ'առնուի, իսկ երկրորդին քէչ
կամ գրեթէ երբեք:

Հունտերը զատելէն վերջ կտաւատի ցո-
լունները թրջոց կը դնեն: Այս գործողու-
թիւնը կտաւի թելերը զատելու համար ամե-
նէն գլխաւորը և կարեւորագոյնն է, որու
նպատակն է բաղաւաճել խմորումով կարգ մը
մածուղ նիւթեր, որոնք ոչ միայն թելերը ի-
րարու սերտիւ փախուցած են, այլ և այդ
թելերը ցոլունին փառեղին (liber) և ներքին
փայտեղային մասին: Սովորաբար թրջոցի եր-
կու եղանակ կայ. 1. Պաղ ջրի թրջոց, որ կը
կատարուի թէ՛ հոսուն և թէ՛ միայուն ջրե-
րու մէջ. 2. Ցօղի (չիյ = rosée) ազդեցու-
թեամբ:

(Շար.)

2. FOLUS

Կը խնդրուի մեր Պատ. Գործակալութիւն-
ներէն և Յարգոյ Բաժանորդներէն, որ բա-
րեհաճին Նոր Տարիէն առաջ յետեւալ բաժ-
նեզինները զրկել: Այս առթիւ կը յիշեցնենք
նաև մէկ քանի բաժանորդաց այն խոստում-
ները, զորս ըրած էին նամակով, քիչ օրէն
իրենց բաժնեգիրք զրկելու մասին:

Առ

Իզմիսցի դերձակն, Պ. Գ. Կիրակոսեան

Օգտաշատ «Հանրագիտակ»ի միջոցաւ
Ձեր առ մեզ ուղղած պատուական նա-
մակը կարգաւով, կը փութանք սոյն երկ-
տողով դահացում տալ, ըստ կարելոյն
Ձեր փափաքներուն:

Մեր մատուցած ծառայութեանց մա-
սին խիստ կը չափազանցէք Ձեր գովեստ-
ներն և կը շառագունէք զմեզ. մենք իբր
յետին մշակ և արհեստին մեր մէջ զար-
գացման նախանձախնդիր, կը սիրենք
յարատե ուսումնասիրել, աշխատիլ եւ
բարձրացնել զայն, ու փորձառական ար-
դիւնքը մերովսանն հաղորդել մեր նման-
եաց: Սիրելիս, «Մարդ գիտցած ար-
ուեստին գաղանիքը մինչև գերեզման
իրեն վերապահելու է» ժողովրդական
առածը փոքրոքի մարդու մտածում է:
Ուրեմն՝ մի՛ զարմանաք Սիրելի Պարոնս,
երբ մենք գրական ասպարէզի իբր՝ յե-
տին վաստակաւորը կուգանք մերովսա-
նըն, մեր արհեստին գաղանիքները մեր
արհեստակիցներու տրամադրութեան
տակ դնելու:

Գովելի է Ձեր արուեստասիրական
եռանդը, որով կը ջանաք և կը փափա-
քիք հաստատուն քայլերով յառաջդի-
մել և այս մասին կ'պատէք «Ագամ»ին
օր առաջ ի ըյս դալուն:

Արդէն թէ՛ աստ բանիւ բերանոյ և
թէ՛ զանազան գաւառներէ մասնաւոր
նամակներով «Ագամ»ի հրատարակու-
թիւնը կը խնդրուի:

Իրաւ է թէ եօթը տարիներէ ի վեր
է որ գրական ասպարէզէն քաշուած
ենք, բայց առոր փոխարէնն ալ առանց
գաղար առնելու, գիշեր և ցերեկ լռիկ
միջիկ աշխատելով նիւթերու ընդարձակ
պաշար մ'ամբարեցինք, և այժմ պիտի
սկսինք կարգաւ և անընդհատ հրատա-

րակելու, առաջնութիւնն «Ադամ»ին տալով:

Այս զեկուցումը կրկին ակնկալութեանց վերապահած էինք, բայց քանի որ Ձեր անհամբեր եռանդը կանխեց զմեզ, այժմ կը պարտաւորինք ըսել թէ, արդիւնաչափ «Հանրագիտակ» հանդիսիս Վայելչազարդութեան Բաժինին համար բացուած բաժանորդագրութեան կանխորոշ թիւը գրեթէ լրանալու վրայ է, և քիչ օրէն պիտի սկսինք զայն հրատարակել: Ուստի անոր առաջին թիւին մէջ պիտի տեսնուի նաև «Ադամ»ի պարունակութեան ծանօթութիւնը, ծաւալը և բաժանորդագրութեան Ազդը:

Ուրեմն, քիչ մ'ալ համբերութիւն:

Մ. ԴԱԼԵՆՏԵՐ

Մ. Խ.—Իցիւ թէ ամէն հայ մասնագէտ, իր ճիւղին վերաբերեալ գրական աշխատասիրութիւններով օճան կանգնէր արհեստագործ ժողովուրդին, և կրկնակ տեսակետով բարոյապէս թէ նիւթապէս, իր շահը, ակնկալութիւնները, յառաջդիմութիւնը, ժողովուրդի մտաւոր զարգացումին մէջ փնտռէր: Այդու՝ մարդասիրական պարտք մը կատարած ըլլալու միտքարութեանն աւելի, ժողովուրդին մտաւորական մակարդակը բարձրացնելով, մասնագէտներու զգալի պէտքը ճանցուցած պիտի ըլլար անոնց, որով և միշտ շահու մեծ բաժինը իրեն պիտի մնար: Բազդատեցէք բժիշկի մը դիրքը՝ քաղաքակրթեալ ժողովուրդի մը և տգէտ կամ կէս վայրենի ժողովուրդի մը մէջ, և ցուցուցէք ինծի մանագէտ մը, որ տգիտութեան մէջ թաղուած ժողովուրդի մը մէջ վայելէ այն արժանիքը, փառքը, և իւր աշխատանաց պտուղը, ինչ որ պիտի կրնար վայելել քաղաքակրթ աշխարհին մէջ մտաւորապէս զարգացած ժողովուրդին քով: Ինչ որ ալ ըլլայ, նոյն իսկ շահախնդիր և փառամոլ գաղափարները մէկ կողմ

թողլով, մարդ՝ իր շրջանակին մէջ պարտաւոր է, յանուն մարդասիրութեան և ընդհանրութեան յառաջդիմութեան, իր աջակցութիւնը նուիրել ժողովուրդի մտաւոր զարգացման, որու մէկ անհատը ինքն իսկ է, և ինքն իսկ պէտք ունի և կ'սպասէ այդպիսի աջակցութիւններու, և այդ օրինակ մարդասիրական աջակցութեանց շնորհիւ է որ, իր մասնագիտական հանճարը կամ տաղանդը կը փայլեցնէ:

Ձէք տեսներ Հանրագիտակը, որ իր ուղղութիւնով և պարունակութիւնով կը շանայ օրինակ հանդիսանալ, արհեստագործ և երկրագործ դասակարգին մտաւոր զարգացումին հետ, տնտեսապէս անոնց դիրքը բարձրացնելու ազնիւ գործին, և հակառակ ժողովուրդի ստուար մեծամասնութեան անտարբերութեան, անիկա պողպատէ կամքով յառաջ կը տանի իր գործը: Ձարմանալէ աւելի, ջանացէք դուք ալ ձեր սահմանին մէջ ստար կանգնիլ այսպիսի օգտակար ձեռնարկներու, որպէս զի՝ յարատեւութեան մէջ օգտակարապէս և իրաւամբ վայելէք անոր արդիւնքը: Ձեր յոյսերու իրականացումը փնտռեցէք Հանրագիտակի յառաջդիմութեան և յարատեւութեան մէջ. համոզեցէ՛ք ձեր բարեկամները, խորհուրդ տուէք անոնց, որ բաժանորդ գրուին Հանրագիտակի. և վրաստան եղիք որ, ո՛րչափ կանուխ այս թերթի նիւթական կացութիւնը բարւոքի, ա՛յնչափ շուտ՝ անիկա ճոխ և օգտակար պարունակութիւններով պիտի ներկայանայ հանրութեան:

ՄԱՆԻՍԱՑՈՑ ՆԵՐԿԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Շ Ո Ւ Ր Զ Ը

Ո՛չ, երբեք չպիտի վարանէի, Տէր Խմբագիր, ստէպ մանրամասն նկարագրութիւններ ընելով՝ պարզել Մանիսայի հայ ազգայնոց ամէն տեսակ արհեստներն ու զբաղումները,

բացատրելով իր ամէն կողմերը, ըլլայ ոստայնանկութիւն և ուրիշ արհեստ, երբ առաջին անգամ քաջ վստահ ու հաւաստի չլինէի թէ ըստ կարի եղած մեր ուսումնասիրութիւններ իր ստացած ու ստանալի բացատրութիւններով քաղցր արձագանք պիտի գտնեն հայրենակցացս ականջներուն, քանի որ խնդիրը հանրային օգտի մը շուրջը կը դառնայ. և իրենց ընթերցումով ու ճարտարարուեստական մտածելով երկուստեք կրաւորական շահ մը պիտի գոյանայ հայրենակցացս ու Պատ. Խմբագրութեանդ միջեւ. ըստ որում այսպիսի ձեւնարկ մը ո՛չ առանց քաջալերութեան յառաջ կ'երթայ, և ոչ ալ կ'ստանայ այն երեւակայելի արդիւնքը զոր կը տրամադրէ ճշմարտապէս «Հանրագիտակ»ի վարչութիւնը. զի ցաւ է մեզ ըսել թէ «Հանրագիտակ»ի նման կարեւոր թերթի մը բաժանորդաց թիւը այսօր քաղաքիս մէջ այնքան դոյզն համեմատութիւն մը ունի դեռ՝ իւր բազմամարդութեան բաղդատամբ՝ քան ինչ որ պարտ ու պատշաճ էր 5-600 տուներէ բաղկացեալ ժողովուրդի մը համար կարեւոր թուով բաժանորդութիւն մը կազմել: Բայց ինչ որ է այս մասին չափազանց յոռետես մը չըլլալու զղձանքէն մշտեալ պիտի լինէր հետեւէն հրապարակ նետել այն ամէն արհեստական ու գիտական գործողութիւնները՝ որոնցմով կ'զբաղի այսօր Մանիսայի հայ ժողովուրդը, մատնանիչ ընելով իրենց թերթի ու անյաջող կողմերը, որոնց համբերատար պիտի կցէ անշուշտ «Հանրագիտակ» իւր օգտակար պատասխանները, լուրջ բացատրութիւններով ու ժողովրդական զիւրահասկնալի լեզուով բացատրուած:

Ուրախ եմ որ մեր յարգելի հայրենակից ու վաղեմի բարեկամ Պ. Գրիգոր Շահինեան, իրր ոստայնանկի որդի՝ և նախանձախնդիր իր հայրենական արհեստին յառաջդիմութեան՝ ինքն ևս կուգայ պարզել՝ իր թաղեցւոց մանկայագործութեան թերթի և յոռի կողմերը՝ բաւական մանրամասն նկարագրելով՝ երանգներու ու գոյներու բազալրութիւնները ու չափերը, որոնց գլխաւորաբար առաջին զբաղումն է արդարեւ ոստայնանկութիւնը: Պ. Շահինեանի բացատրած բազալրութիւնները՝ յիշաւի որքան որ համապատասխան հանգամանք մը ունին նաեւ մեր

վարժ թաղեցւոցս գործածած եղանակին, ներկերու չափերու բազալրութիւնները կը տարբերին սակայն ուրեք ուրեք, որ առաջին անգամ կը լինի շիտակը զրուցելով կը կարգաւ ու կը հասկնամ այս տարբերութիւնը ու կը մտածեմ թէ լրագրութեան օգուտը մինչեւ ո՛ւր կրնայ հասնիլ արդեօք երբ, իրարմէ գրեթէ կէս ժամ հեռաւորութիւն ունեցող երկու թաղեր միեւնոյն արհեստը և միեւնոյն գործողութիւնները ունենալով հանդերձ իր ներկերու չափերուն քանակութեանց տարբերութիւնը այսօր լրագիր մը կամ աւելին «Հանրագիտակ» ցոյց կուտայ առաջին անգամ. օրինակի համար, առնենք նախ կարմիր ներկելը, որ որքան որ գործողութիւնները նոյն են, ներկերու քանակը անհամեմատ չափ ունի, ինչպէս մէկ անգամով միայն 100 տրամ «պիզարին» տալ, մինչդեռ վերի թաղեցիք 75ական տրամէ երկու անգամով 150 տրամ կուտան: Բ. առնենք սւււր, թող որ շատեր երբեմն առանց խաշելու ալ կը ներկեն դերձանը, այլ փոխանակ 120 տրամ պիքրօմաթի՝ 100 տրամ և 75 կամ 80 տրամ անելինի տեղ 50-60 տրամով գլուխ կը կապեն: Գ. դեղին ներկը, վերի թաղ նորէն տարբեր չափով կուտայ եղեր ու վարի թաղ տարբեր, այդինքն 75 տրամ ասիտ տը բլօմպ 75 տրամ քարմարցանկ և 50 տրամ պիքրօմաթ, գումարը հոս 200 տրամի կը լինայ, իսկ վերի թաղեցւոցը 325 տրամ, ահա մեծ տարբերութիւն և կոյր զիւրայն գործողութիւն: Դ. նարնջագոյնը ու կանաչը գրեթէ նոյնն են. կը տարբերին կըրկին սրճագոյնին մէջ. միոյն քանակութիւնը պիքրօմաթին 50 տրամով կ'ըլլայ ու միւսինը 75 տրամով կ'ըլլայ եղեր. չմոռնանք ըսել թէ այս ամէն գործողութիւնները կ'ըլլան մասնաւոր հողէ շինուած խոշոր թաղարներու մէջ. բաց ի միոյն խաշոցի համար պղինձ ամաններ գործածելէ, որովհետեւ շատեր ներկերու ազդեցութենէն ստէպ վնասներ տեսած են պղնձէ ամաններ գործածելով, զորս անխտիր ծակծկած է ասիտ միւրիաթիքը. մասնաւոր ուշադրութեան առնելիք կէտ մը կայ այս ամէնուն մէջ, զոր ստէպ յեղյեղած եմ բարեկամ ոստայնանկներու, երբ սոքա կ'սկսին գանգատիլ թէ՛ եւրօպական ներկերը հետզհետէ խարդալի կը դառնան, որ ստէպ

իրենց դերձանները կը փոխեն, ինչպէս պատահած է շատ անգամ սեւ ներկելու մէջ. մեր խոնարհ կարծեօք, պատճառները ու բացատրութիւնը տուինք, սակայն թէ՛ երբ ներկելու գործողութիւնը պիտի կատարեն, ի մէջ այլոց ասիտ միւրիաթիքը կամ զաճ եաղին պատրաստուած ջրին մէջ թափելու ատեն՝ լաւ մը խառնեն ու հովեն ջուրը, մինչև որ լաւ մը խառնուի միւրիաթիքը ու անմիջապէս դերձանը մէջը թողուն՝ առանց մէկ ծայրը դուրսը մնալու, ըստ որում միւրիաթիքը ու զաճ եաղը իւրի յատկութիւնները ունենալով միշտ ջրի երեսը մնալու տրամադիր՝ դէպ ի վեր սողալով, երբ ներկիչը քիչ մը կը դանդաղի դերձանը ջրի մէջ ընկնելու, միւրիաթիքը ջրի մակերեւոյթը պատելով բնականաբար դերձանը առաջին անգամ պիտի ստանայ այդ փոխեցուցիչ թիւուն, ուրկէց յառաջ կուգայ փոփոխութիւնը. քանի մը փորձեր թէպէտ այս մեր ըսածը հաստատեցին, բայց այս գիտութիւնը ընդհանուր չըլլալուն առթիւ կը լսենք շատ անգամ թէ այս ինչը կամ այն ինչը իր 5 կամ 10 բաքէթ դերձանը փոխեցուցեր է. և «Հանրագիտակ»՝ այս բացատրութիւնը հրապարակելով՝ այս զգուշութիւնն ալ թող հաճի հրապարակել իր առաւել իմաստալից ու ճշիւ բացատրութիւններով (*):

Ու յետոյ, քանի որ հոս հիմա առիթը կը ներկայանայ մեզ. պատ. «Հանրագիտակ»է պիտի խնդրէի որ իր բացատրութիւնները երբ տայ պարբերաբար երանգներ ներկելու մասին անայլայլ ու աժան ներկերու քանակը՝ խօսած միջոցին փոխանակ «կըրամ» կամ «իտրա» գործածելու, ուղղակի թրքական 400 տրամ մէկ օխայով խօսի որով աւելի դիւրահասկնալի պիտի ընէ իր բացատրութիւնները գաւառացի ժողովուրդին և թէ՛ երբ գիտական կամ արհեստական բաւեր գործածէ թրքերէնը կամ ռամկերէնն ալ առ այժմ կցէ իրենց անմիջական քովի՝ կը փակագծի մը մէջ, ցորչափ գաւառական բաւերու հաւաքածոն պիտի ուշանայ դեռ մինչեւ սպասուած օրը:

ԳԵՂԱԾ Կ. ՈՒՆՃԵԱՆ

(*) Արդէն բացատրութիւնները սրուած են թիւ 40ի մէջ:

ԴՊՐՈՑԻՆ ՇՈՒՐՁԸ

Կրթական յարկի տակ՝ երբ ուսուցիչը իրաւունք ունենալ կը կարծէ բացադանչել ու տղուն երեսին վճիռ արձակել թէ՛ «դուն բան մը չես կրնար սորվիլ կամ անկարելի է որ ընդունակութիւն ունենաս ուսման ո՛ր և է առարկայի մէջ», միթէ այդ փոքրիկը նուա՞գ իրաւունք ունի նոյնգունակ ու աւելի անողոք վճիռ մը նետելու իր քիչ մը փութկոտ ուսուցչին ճակտին թէ «դուն ալ այս գործին մարդը չես, մինչ ես կարող եմ ամէն ձև ու կաղապար՝ ստանալ, դուն կ'անտեսես իմ մէջ պահուած գանձը՝ որ սահմանուած է օր մը բանի մը ծառայելու»:

Ուսուցիչը ամէն անգամ որ դժուարութեան կը բաղխի ուսուցանելու գործին մէջ, կրնայ զինքը հանդարտեցնել և շուտով վերահասու ըլլալ իր անյաշոգութեան զաղտնիքին, երբ ինքն իր մէջ ամփոփուի ու քննէ հոգեբանի աչքերով իր կարողութիւններն ու իր ընդունակութիւնը. վասն զի շատ անգամ ոչ թէ բոլորովին անպատրաստ կը մոնէ գասարան, այլ և յաճախ կ'անդունէ ու կ'ուրանայ մանկան վրայ այն ձիւրքերն ու առաւելութիւնները, զորս թէ գիտնար գործածել՝ անակնկալ արդիւնքներ պիտի գտնէր իր առջև: Վերջապէս միսի ու ոսկրի կոյտ մը չէ այն, զոր ըստ հաճոյս կը դարձնարձէ ու կը չարչրկէ:

Դժբաղդաբար շատ սխալ համոզումով մեր ծնողք կամ հոգաբարձութիւններ կը յանձնեն մեր փոքրիկները շատ անգամ ապիկար մարդերու կամ դպրոցէն փախած թերուս «ճահիլներու», որք իրենց բիրտ ու անվարժ ձեռքերով խաղի կ'ելլեն այն փափկիկ մարմնին հետ, որու մէջ պահուած կայ օրրոտ մը, որ կրնայ ամենէն վսեմ ու սուրբ զգացումները սնուցանել և որք՝ անտարբեր ի-

րենց զսհին, չեն խղճար ճանկել ու ճանկաւորել այն անբիծ ու անխորշամ ճակատն՝ որու ետին թաքցած կայ թերեւս հանճար մը:

Քիչ մ'աւելի ուշ դնենք այդ փոքրիկ մանուկներու, որոնք իրենց չարածիւթ թիւններովը մեզի ձանձրոյթ կը պատճառեն, երկիւղած ու բարեպաշտիկ վարանումով մը մատենանք անոնց, չի խրատուցենք անխորհուրդ մերձեցումով մը. անոնք աչք ունին, կը տեսնեն ամէն բան ու կը դատեն ամէն վարմանը: Մի վիճակով անոնց անձնասիրութիւնը անոնք շատ կը բարկանան ու շատ կը համակրին. ու՛ երբ վրէժ լուծել ուզեն, միշտ իրենց անձին դէմ կը դարձանք ամենէն խալ ու անմուռն՝ այլ միշտ արտայայտուն միջոցները: Երբ միտնդամ ու ծանախ իրենց ուսումէն, ո՛ւ մնաս բարձր բոլոր բողձացուած արժանիքի և դերակշիւակնկալութիւններու:

Եթէ ամէն ճարտարարուեստի մէջ կը փնտռուի ճաշակի նրբութիւն, խնամատ ուշադրութիւն, ստիւն յատկութիւն մը, երբ՝ կ'ըսեմ, մեր մէն մի պիտոյից նիւթն ու ատաղձը կը քննենք կը կրկանենք, զայն պատրաստող «վարպետները» բաղդատականի կը զննենք, ինչո՞ւ աւելի նախանձախնդիր ու սրատես չըլլանք մեր զաւակաց կրթիչներու հանդէպ: Մեր սրաէն փրթած այդ մանրիկը սեղան կամ աթոռ մը չէ, զոր կը յանձնենք կահադարձին: Ընտիր կերպաս մը կամ գոհարեղէն մը պատրաստելու համար, համբակի մը չենք յօժարել սոսկ, թէպէտև նիւթն է որ կը փնտռուի կամ կը կոտորուի. մինչդեռ մեր դաստիարակներու մասին մեր նկատողութիւն շատ թեթեւ ու անցողակի է. անոնց արժանիքին ու նկարագրին իսկութիւնը պէտք է ջանանք տեսնել մեր զաւակաց վրայ, և ոչ թէ այս ու այն յորդորանքի անտարբեր համակերպումին մէջ:

Կրթութեան հոգն ուղղակի ստանձնող անձեր կամ մարմիններ քիչ մը խիղ-

ճով վարուին. ու ծնողք՝ միշտ արթուն մնալով, կարող ձեռքերու յանձնեն զաւակաց կրթութիւնը, որպէս զի շլատեն չանճիտեն այն մատաղ հոգիները, որք իրենց երջանկութիւնը պիտի կազմեն ու բարին պիտի մշտնջենաւորեն:

Մեր նախակրթարանները ընդհանրապէս, մանաւանդ դաւառներու մէջ, յոյժ ողբալի կացութեան մը մէջ կը գտնուին. ապա դժուարին չէ մակարերել թէ՛ շատ մը դաստիարակներու կոչաւ ու անարժան ձեռքը տակ, ի՞նչ սճիւններ կը գործուին ամէն օր ամէն վայրկեան... Ի՞նչ անմեղներ կը զոհուին, ի՞նչ հանճարներ կը մարին: Դպրոցը սպանդանոց մը չէ: Մայրեր, ձեր հոգիի կտոր էակներու կեանքն յաւիտենապէս դառնացնելու համար չծնող այնքան ցաւով ու հեծութեամբ, քիչ մը խնամք տարէք ձեր զաւակաց կրթութեան:

Կէլիպօլու

Գ. Վ. ՀՈՒՆԻ

ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՔ

(Հարստութիւն ԳԻՆ 40)

Ինչպէ՞ս կարելի է կնոջ կաթին բնախր յատկութիւնները ունեցող կաթ մը գտնել. ինչպէ՞ս յառաջ բերել այն բնական և հեշտին բարեխառնութիւնը. և ի՞նչ միջոցներով յարմարցնել մայրենի գորովալի թխուածը՝ ուր խեղճ պղտ՝ չէ ծիծէն կախուած, ամբողջ կեանք մը կը ծծէ. և իր մօր էութիւնը կ'իւրացնէ: Անկարելի է այս: Եւ այս անկարելիութիւն՝ իր երակներէն կեանքով լեցուն կաթի շիթ եր ցայտեցնող մայր մը միայն կրնայ բացատրուի:

Ես պիտի ուզէի որ, մօր մը պակասութեան և կամ ու է պատճառաւ իր կաթի չգոյութեան պարագային մէջ, գոնէ ամէն ջանք չի խնայուի կնոջական կաթէն չի զրկե-

լու այդ դժբաղդ պղծակները, և իր բնականաբար եթէ գանուին կաթ տուող մայրեր, անոնց դիմել ըստ կարելոյն՝ այդ արարածներու կեանքը փրկելու համար. գէթ օրը 2—3 անգամ, և մնացեալ անգամներուն ալ ստիպողարար դիմել արուեստական կաթնտուութեան: Որովհետեւ ո՛չ միայն խարդախեալ կաթերը, այլ մինչև իսկ եթէ կաթը անարատ ըլլայ, և երկար տեղափոխութիւններ կրէ, կ'աւրուի և միշտ տխուր անպատեհութիւններ յառաջ կը բերէ. միայն թէ այն պարագային, երբ կարելի ըլլայ տանը մէջ կով մը պահել, այն ատեն վերոյիշեալ անտեղութիւնները մեծ մասամբ կ'անհետին:

Մանկամարդ մայրերը որչափ առողջ են և որչափ կաթ տալու կարողութիւն ունենան, պէտք չէ երբեք իրենց պաւակը օտարին կամ արուեստականին յանձնեն. ըլլան հարուստ թէ աղքատ: Մօր մը ամենէն քաղցր և հաճոյալի պարտականութիւնն՝ իր նորածինը պաւակը իր կաթով անուցանելուն մէջ կը կայանայ, բնական պահանջմանց համաձայն:

Արուեստական կաթնտուութեան մէջ, ամենէն յարմարագոյնը կովու կաթն է. աժան և ամէն ատեն և ամէն տեղ դիւրութեամբ գտնուելուն համար: Խոտացեալ կաթը՝ զոր կը ծախեն անապաղօժ թիթեզէ տուփերու մէջ, աւելի յարմարութիւն ունի, եթէ խորհարիւնալ չէ. թէև առ հասարակ այդ կաթերը խարդախեալ չեն ըլլար, ինչպէս որ կը հաւատեն: Երբ որչէք կովու կաթով սնուցանել տղան, պէտք չէ երբեք զուտ տալ, որովհետև այդ կաթը կնոջ կաթէն աւելի զօրաւոր ըլլալով, անմարսութիւն կամ զրգռութեամբութիւն յառաջ կը բերէ. ընդհանրապէս ջուր և չաքար կը խառնեն կը տաքցնեն. և վեր ի վերոյ 20 աստիճանի դաղը (ըլքը) վիճակի մէջ կուտան ծծալով. չաքարը անհրաժեշտ է, որովհետև կնոջ կաթը կովու կաթէն աւելի անուշ ըլլալուն, այս վերջինը անոր նմանցնելու համար, չաքար խառնելու է:

Ահաւասիկ թէ՛ ինչ չափով կուտան այդ կաթը: Առաջին օրը (ծնած օրը) 2 ապուրի դգալ կաթ և 3 դգալ չաքարջուր, եփելով և քիչ մը խառնելէն վերջ՝ երեսի սերուցը կ'առնեն, և ինչպէս վերը ըսինք, վեր ի վեր-

րոյ 20 աստիճանի դաղը վիճակի մէջ: Այս քանակութիւնը 24 ժամու համար է: Երկրորդ օրը 6 դգալ կաթ և 4 դգալ չաքարջուր՝ միեւնոյն կերպով պատրաստուած, երրորդ օրը 20 դգալ կաթ՝ սերուցը առնուած, և 12 դգալ չաքարջուր, որ պէտք է 24 ժամու մէջ 10 անգամէն տալ, վեր ի վերոյ 2 ժամը անգամ մը (անշուշտ արթնցած ատենը, այսինքն՝ եթէ քնացած ըլլայ՝ ժամանակը կ'անցնի ըսելով՝ պէտք չէ արթնցնել: Երախան արդէն 3—4 աւուր մէջ վարժութիւն ընելով, ճիշդ որոշեալ ժամուն կ'արթնայ: Գիշերը երբեք կաթ տալու վարժեցնելու չէ՝ գոնէ 5—6 ժամ չարունակ, որպէս զի հանգարտ քնանայ. որովհետև քունն ալ սնունդին չափ անհրաժեշտ է: Զորրորդ օրը 25 դգալ կաթ և 15 դգալ չաքարջուր, և հետզհետէ անպաւարար շատցնելով մինչև առաջին ամսուն վերջը կէս օրաի բարձրացնելու է կաթին և չաքարջուրին քանակութիւնը, 24 ժամուան մէջ 9—10 անգամէն: Երկրորդ ամիսը 225 տրամ, որու 125 տրամը կաթ և 100 տրամը չաքարջուր. իսկ երրորդ ամիսը 250 տրամ, որու 80 տրամը չաքարջուր և մնացածը կաթ: Զորրորդ ամսուն մէջ 250 տրամ կաթ և 75 տրամ չաքարջուր. հինգերորդ ամիսը 300 տրամ կաթ և 50 տրամ չաքարջուր. իսկ վեցերորդ ամիսը 325 տրամ կաթ և 50 տրամ չաքարջուր:

Եթե երրորդ ամիսէն մինչև ութերորդ ամսու վերջը անպաւարար քանակութիւնը բարձրացնելով, մինչև 350 տրամ կաթ առանց ջուրի, բայց միշտ չաքարով:

Թիւ և 10րդ ամիսները մինչև 400 տրամ առանց ջուրի չաքարախառն կաթ:

10րդ ամսուն վերջը՝ կրնաք սկսիլ տղան կարծր սնունդներու վարժեցնել:

Սկզբնաւորութեան համար ամենէն յարմարագոյնը, փաշիպած պաքսիմատն (կալէթա) է, որ չաքարախառն կաթով խառնելով եփել, և դաղը վիճակի մէջ կերցնելու է: Այս սնունդը կարելի է սկսիլ նաև Թիւ ամսէն, և մինչև իսկ 8րդ ամիսէն, եթէ երախան առողջ է:

Առաջին օրը 2 անգամ 2 թէյի դգալի չափ՝ ցերեկուան միջոցին, և երբեք գիշերը. երկրորդ օրը 3 թէյի դգալ, (նախորդ օրուան աւելցուք պահելով հետեւեալ օրը կեր-

ցնեցու չէ, այլ՝ ամէն անգամուն նոր պատ-
րաստելու և լաւ եփելու է) :

Զորքորդ օրէն սկսեալ 2—3 ազուրի դը-
գալ, կէսը առտուն կէսն ալ ցերեկէն վերջ,
և այսպէս շարունակելու է մինչև մէկ ամիս :
Ահաւասիկ ֆրանսացի նշանաւոր Տքթ. Պու-
շիւ մանկաբոյժի հրահանգները այս մա-
սին :

Յոդ կամ 10րդ ամիսէն սկսեալ կարելի է
օրական 3 պլտիկ ճաշ տալ կաթնասուն տղոց :

Այս ճաշը կը պատրաստուի կաթով և հե-
տեալ նիւթերով : Յորենի ալիւր, վարսակի
(եռլաֆ) ալիւր, այս վերջինը ամենէն աղէկն
է, որովհետեւ տղան առուգութիւն կուտայ և
կը կազդուրէ, մանաւանդ եթէ տկարակազմ
է : Գարիի ալիւրը կուտան, եթէ տղան բնա-
կանէն աղեսնդութիւն (գաղղղիւր) ունի :
Խոզկաղինի (սիւլաֆուա կամ փէլիտ ըստածը)
որձալիւրը կուտան եթէ տղան շարունակ ա-
ղելութիւն (ամէլ) ունի : Ատնցմէ գառ
կուտան նաև կաթնալիւր (ֆառին լաթթէ),
որուն բնորոշութիւն տեսակը այժմ հրապա-
րակը «Նէսթլէ»-ի անունով ծախուածն է : Թա-
պեօքա, արարօտ, բրինձի ալիւր, ևլն. կը
տրուի նաև, բայց՝ դժբաղդաբար հրապարակը
ծախուածներուն մեծ մասը խարդախեալ է :
Ուստի ամենէն ապահովը, ցորենի կամ վար-
սակի ալիւրը՝ կամ պաքսիմաթն է :

Վարսակի ալիւրով ազուրի պատրաստու-
թեան եղանակը. — Թէյի գաւաթ մը կաթի
համար՝ 2 թէյի դգալ ալիւր : Կաթը եռացնելու
է. ալիւրը առաջուց քիչ մը պաղ ջրով յարե-
լու՝ և լեցնելու է եռացած կաթին մէջ,
ու շարունակ խառնելու է : Զի մօռնանք ըսե-
լու թէ՛ կաթին մէջ առաջուց պէտք է խառ-
նել քիչ մը շաքար և խիստ քիչ աղ : Երբ
գոնդողի (բէլթէ) աստիճան խտանայ, որ առ-
առաւելն 2 վայրկեան կը տեւէ, կրակէն վար
առնելու է, և միշտ գաղջ վիճակի մէջ կեր-
ցնելու է : Կաթին տեղ թէև ոմանք ջուր կը
գործածեն, բայց ոչ անհրաժեշտ կ'ըլլայ և ոչ
ալ համեղ. հետեւաբար, տղան ալ ակործով
ջուտեր. կրնաք սակայն մսի ջուր ալ գոր-
ծածել, բայց ժամանակ մը վերջը գործածելը
աղէկ է :

Վարսակի ալիւրի վերայիչեալ դոնդողը շա-
րունակ գործածելու է, մինչև իսկ կաթէն
կարելէն վերջն ալ, որովհետեւ ինչպէս վերը

ըսինք, կազդուրիչ և շինիչ յատկութիւն ունի :
Գարիի ալիւրի գործածութիւնը. — Մէկ

ու կէս թէյի դգալ գարի, սովորական սրճա-
ղացի (խոհվէի տէյիրմէն) մը մէջ աղացեք,
սրճաղացը լաւ մը մաքրելէ վերջ. որ առա-
ջուց մէկ քանի դգալ գարի աղալով, կը թա-
փեն, մինչև որ սուրճի հետք չի մնայ :

50 տրամ ջուրի մէջ լեցուցեք գարիի ա-
լիւրը և պտղունց մը աղ, մէկ քառորդ ժամ
եռացուցեք. մաքուր լաթէ մը պարզեցեք
(սիւլաֆուա բնէլ) կէսին չափ կովու կաթ լե-
ցուցեք վրան, և քիչ մ'ալ շաքար, երբ տա-
կաւին տաք է. յետոյ գաղջ վիճակի մէջ լե-
ցուցեք մաքուր շիշի մը մէջ, և գործածեցեք
(միշտ գաղջ) երբ տղան աղեսնդութիւն ունի :

Խոզկաղինի որձալիւրը պատրաստ կը ծա-
խեն դեղագործները, բայց կրնաք տունէն
ալ պատրաստել. խոզկաղինի վրայի կեղևները
հանելով, և սուրճի պէս խարկելով, որ յե-
տոյ սրճաղացով կ'աղան : Գաւաթ մը ջուրի
մէջ, մէկ թէյի դգալ խոզկաղինի ալիւր և
նոյնչափ ալ շաքար դնելով, մէկ քառորդ
ժամ կ'եփեն. լաթէ պարզուտէ մը կ'անցնեն
և կը խմցնեն : Խիստ համեղ կ'ըլլայ խոզկա-
ղինով պատրաստուած սուրճը. մինչև իսկ
չափահասներ կրնան գործածել զայն, մա-
նաւանդ աղելութեան ժամանակ. և իր
ախորժելի համին համար կարելի է նաև մա-
սամբ սովորական սուրճին խառնել :

ԱՐԱՔՍ

ԽՈՀԱՆՈՑԻ ԲԱԺԻՆԸ

Ամէն բան իր ժամանակը ունի :

Յօդուածս այսպէս սկսելով մի՛ կարծեք
որ, այսօր ալ բարոյախօսի մը դերը պիտի
ստանձնեմ. ոչ, միշտ ես իմ ճիւղիս մէջ ա-
ւելի հաճոյք մը կ'գգամ տնական առօրեայ
պէտքերուն վրայ գրելով, և գործնականա-
պէս օգտակար հանդիսանալ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ
ընթերցողներուն. ուստի՝ քանի որ հիմա ձը-
մեռ է, խմբեղէններու և անուշեղէններու
ճիշտ ժամանակը ըլլալուն, պիտի փորձեմ այս
անգամ ալ տնոնց վրայ գրել, քանի որ ե-
կածը Կապանդ, Ծնունդ և Բարեկենդան է.
և ընդհանրապէս այդ օրերուն մէջ մեր ճա-
շատեղանները չալյօրէն կը պճնազարդենք,
չալիւր գի ուտելիքներով : Թէև այս ալ ոչ
նուազ իրաւունքով. ինչպէս որ վերը ըսինք

ամէն բան իր ժամանակը ունի. ձմրան ցուրտին պատճառաւ բնութիւնը կ'զգացնէ մեզի՝ ստամոքսն իր պարարել այնպիսի ուտելիքներով: որոնք ստամոքսի մէջ բազալուծուած աստեղնին, կենդանի ջերմութիւնը մշտապէս պահելու հարկաւոր առատ նիւթ մատակարարեն: Խմորեղէն և անսւշեղէն սնունդներն ալ առատօրէն կը պարունակեն իրենց մէջ այդ կարգի նիւթեր. և այս պատճառաւ ձմեռը շատ կը փնտռուի: Առ այժմ կ'սկսինք գրել «մէսէնի» ի վրայ (*):

ՄԷՆԵՆԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Մէսէնիը՝ խիստ վտակահամ, նուրբ անուշեղէն մէս, գրեթէ ամենուրեւ ճաշակին համաձայն և ընդհանրապէս շատ կը փնտրուի. կը բաղկանայ 1. թեթեւ խմորէ մը, որուն պատրաստութեան եղանակը ստորեւ պիտի բացատրենք. և 2. միջուկէ մը, որ կը պատրաստուի սերուցէ (**):

Մաքուր ցախաւելով մը զարկէք 12 հաւկիթի ճերմկուցը, մինչև որ աղէկ մը փրփրի. աւելցուցէք կէս քիլօ փոշիացած չաքար. քիչ մը նարնջի կամ վարդի, մառաչկենիի, ուռի, սուրճի, վանիլիայի, ելակի ևւն. խառնութիւններ. (ասոնցմէ որը որ կ'ախորժիք). և շարունակ ծեծեցէք որ լաւ մը խմորին:

Երբ խմորը ըստ բաւականի պատրաստուած է, երկաթէ թիթեղէ տախտի մը մէջ ճերմակ թուղթ մը գրէք. և խմորը զգալով մասսա մաս առնելով այդ թղթին վրայ գետեղեցէք կէս հաւկիթի ձեւ մը տալով:

Ուշադրութիւն ըրէք որ, ամէն կտոր իրարմէ 3 հարմեթր հեռաւորութիւն ունենայ: Խիստ բարակ ծեծուած չաքար ցանեցէք ձեր մէսէնիներու երեսը. և քիչ տաքցած փուռի մէջ եփեցէք: Եփելէն վերջ ըզ-

(*) Միայն թէ՛ ասոնք պատրաստած ու կերած աստեղնիդ, մի մտնաք որ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ ալ ապրելու պէտք ունի. և ասոնք որ իրենց բաժնեգինները ցարդ չեն իրկած, փութան ՀԱՆՐԱԳԻՏԱԿն ալ անմասն չի հանել: (Մ. Խ.)

(**) Սերուց՝ թէև «քուփ» ալ ըսել է, սակայն փոխանակ քուփի (եթէ չի գտնուի) կրնաք տեղական «սերն» ալ գործածել:

գուշութեամբ թղթէն հանեցէք. և ստորակ կողմէ՝ որ թղթին վտակած էր, խրաքանչիւրին մէջտեղը զգալով մը մըլուով՝ կամացուկ մը բացէք. չարեցէք այժմ մաղի մը վրայ և գաղջ փուռի մէջ չորցուցէք. եթէ տրամադրելի փուռ չ'ունիք, կրնաք մաղնաղ կրակի վրայ ալ չորցունել: Հրամցուցած աստեղնիդ մէջտեղերը առածին չափ ուէ անուշ, խիստանուշ կամ սերուց լեցուցէք, և երկու կըտորը իրարու վրայ դնելով՝ հաւկիթի ճերմկուցով զգուշութեամբ եղերքները փակեցէք:

Թէև սովորաբար մէսէնիներու երեսը պարզ կ'ըլլայ, բայց եթէ կ'ուզէք որ համեղ և զարդարուն ըլլայ, այդ առթիւ խմորը թղթին վրայ դնելէն վերջը, ցանեցէք վրան խոշորիկէ ծեծուած պիստակ, նուշ կամ կորնթական անկուտ չամիչ:

ԻՏԱԼԱԿԱՆ ՄԷՆԵՆԿ

100 տրամ չաքարը թանձրացուցէք (չէ՝ վիրսի խվամի չափ). վար առէք սոնը. և մէջը սրաղ ջուր պարունակած ամանի մը մէջ նստեցուցէք. առաջուց փրփրցուած 4 հաւկիթի ճերմկուցը չաքարին մէջ լեցուցէք ու լաւ մը զարկէք մինչև որ աղէկ մը իրար խառնուին: Վարդազոյն ներկեցէք և վերջ յիշուած եղանակով եփեցէք. և աւարտեցէք միւսնայն կերպով:

ՏԱՆՏԻԿԻՆԸ

ԳԼԽԱՒՈՐ ԱԶԳԱՑ ԴՐԱՄՆԵՐԸ

Այսօր կ'ուզենք Անգլիայ գրամներու տրփէքը՝ Օսմանեան և Թրանսայի գրամներու տրփէքներով ներկայել, և անոնց վրայ համառօտ ծանօթութիւններ տալ. կարծելով թէ ՀԱՆՐԱԳԻՏԱԿի ընթերցողաց ոմանց համար գոնէ շահեկանութենէ զուրկ չի կրնար ըլլալ. յաջորդ թիւերով ալ միւս ազգաց գրամներու մասին գրել խոստանալով: Անգլիական գրամներու միւսթիւնը լիտ սթէյլինն է և կը բաժնուի՝

1 լիտ սթէյլին	= 20 չիլին
1 չիլին	= 12 բեննի
1 բեննի	= 4 ֆարթինի

երկրին մէջ կայ Ոսկի, Արծաթ և Պղինձ գրամներ :

Ոսկի գրամը լիւրս սթէյրլինն է և ունի մէկ ստորաբազմապատիկ որ է կէս լիւրս :

Արծաթ գրամի բազմապատիկներն են 5, 2,5, 2 շիլին . ստորաբազմապատիկը 0,5 շիլին :

Պղինձ գրամներն են . 1, 0,5, 0,25 բեննի :

ՈՍԿԻ ԴՐԱՄ

ՄԱՆՐ. ԿՐԱՄ ՅԱՐԳ. ՖՐ. ԳՐԵ.

Լիւրս սթէյրլին	7,988	0,916	25,12	110,5
0,5 »	3,994	»	12,56	55,25

ԱՐԾԱԹ ԴՐԱՄ

Գրամն	5 շիլին	5,60	24,72
0,5 »	2,5 »	2,80	12,36
Ֆիւրին	2 »	2,24	9,88
Շիլին		1,12	4,95
0,5 շիլին		0,56	2,48

ՊՂԻՆԶ ԴՐԱՄ

1 բեննի	0,10	0,41
0,5 »	0,05	0,21
0,25 » (կամ 1 փարթիկն)	0,025	0,10

Այս ցուցակէն յայտնի կը տեսնուի թէ՛ 1 ոսկին որ քսան շիլին է, Օսմ. գրամով արծէքն է 110,5 զրշ. 1 շիլինը որ լիւրայի 20-երորդ մասն է, սկիաի արծէք 5,5 զրշ. բայց 4,95 զրշ. միայն կ'արծէ, ըստ այսմ խմանալու է միւսներուն համար ալ : Ոսկի գրամին յարգն է 0,916, այս կը նշանակէ թէ 1000 տրամ ծանրութեամբ ոսկի գրամին 916 սըրամը զուտ ոսկի և 84 տրամը պղինձ է, որմէ կը հասկցուի թէ շատ ազնիւ է . մինչդեռ ֆրանսացոյ ոսկի գրամին մէկ տասներորդը պղինձ է :

Օրէնքը այնպէս տրամադրեր է որ ոսկի գրամը բռնի ընթացք ունենան . պարզենք եթէ մարդու մը սրտաքը 60 շիլին է՝ ըսել է թէ 3 լիւրս է պարտքը չի կրնար արծաթ գրամով հատուցանել . օրինապէս 40 շիլինէ աւելի արծաթ գրամ մէկ անգամէն չանցնիր : Եւ պղինձ գրամով ալ մինչև 12 բեննի միայն կրնայ վճարուիլ :

Անգլիոյ մէջ շրջաբերութեան հանուած գրամաթղթեր ալ շատ կան, որք մեծ յարգ ունին . մեծ օքսանակ գումարները գրամաթղթով կը կարգադրուին . այս թուղթը կը հա-

նեն պանքաները, որոց մէջ առաջին տեղը կը բռնէ Անգլիոյ գրամատուներ (Պանք օֆ Էնկլէնա) ըստածը, որու հնութիւնը երկու դարէ աւելի է (1694 ին հիմնուած է Լոնտոն) . ասոր հանած գրամաթղթերու գումարն 30 միլիոն լիւրայի կը հասնի, արծէքներն այլ և այլ դասակարգերու բաժնուած . ամենէն ստորին արծէք ունեցողը 5 լիւրս է . այն գրամատուներ կը գտնվէ Տէրութեան հասոյթը, ինք կը կոխէ գրամները, ինքն է ելեւմտից պաշտօնատուներ . ունի բազմութիւ օժանդակ ճիւղեր Լիվերբուլ, Մանչէսթըր, Պէյլիքհեամ, Պրիսթըլ, Լիստ, Նիւքասթը ևն . ևն . քաղաքացի մէջ . այս պանքան իր ուղղամիտ և անյաղապարհ ընթացքով . ձեռնարկած չընդարձակ գործառնութեամբ և շատ երկիրներու հետ ունեցած յարաբերութեամբ տիեզերական համբաւ ունի :

Տ. ՊՕԶԱՃԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՀ՝ ԱԶԱՐԵԱՆ ՎՍԵՄ . ԺՕԶԼՖ ԷՖ . Ի

«Հանրագիտակ» ևս կարի թանկագին հայ մտքին և կարի մտացի հայ սրտին ճշմարիտ ու բարեպաշտ մշանջների երեսփոխաններէն մին՝ ընդհանուր Ազգին և իր բիւրաւոր ներկայ և ապագայ ընթերցողաց հետ՝ կը բաժնէ ազգապանծ Ազարեան Ազնուատուհմ Գերգաւաանին արցունքն ու սուգ, զոր հեզին և զոր զգացին հանրածանօթ Ազարեան վոեմ . Ժողէֆ Էֆէնաիին մահտարածամու անակնկալին առթիւ :

Ինչպէս ամէն թերթեր հրապարակաւ ու դրուատականաւ հռչակեցին, նոյնպէս մենք ևս կը յայտարարենք սա ճրշմարտութիւն՝ թէ Հռոմէական Հայոց Բարձրաշնորհ Կաթողիկոս - Պատրիարք Գերերջանիկ Ազարեան Հոգևոր Տիրոջ կրտսեր եղբայր՝ Տիրա Ժողէֆ՝ ո'չ միայն իբրև իրահաւատ ու ջերմհռանդ քրիստոնեայ՝ նշանաւոր էր իր կրօնական պար-

տաճանաշութեամբ. ո՛չ միայն իբրև ընտանեաց տէր՝ իր զաւակաց բարեկրթութեան փապար ու իտէալ Հայր մ'էր, ո՛չ միայն Հայ ազգին ու մեր երկրին եւրոպակիրթ և եւրոպածանօթ պատուաւոր պարկեշտ, հաղուազիւտ Հայ պանքէր մը, հայ վաճառական մ'էր, և Հայ հայ-լայֆին այնքան պատուակիր ու օժտաբեր ծանօթ անդամն էր, որ՝ Մ. ընկերութեանց, դպրոցներու ի նպաստ, հազարաւոր ուկիներ տարուէ տարի ո՛չ միայն շահեցուցած է, այլև նոյնինքն բազմաթիւ հայ դժբաղդներու, հայ սրբերու, օճան և օժանդակ հանդիսացած է. և անոր համար է որ զինքը ճանչցող ընդհանուր ազգայինք ու միջազգայինք դառնապէս կ'ողբան իրեն նման բարերարի մը մեծ և անսգիւտ կորուստը:

Հանգուցելոյն յուզարկաւորութեան Հանդէսն ազգային թէ համազգային սգոյ կերպարանքն առած էր: Պոլսոյ ամէն ազգերու պաշտօնական և անպաշտօն, կրօնական և աշխարհական դասերն իրենց պատկառելի ու նշանաւոր ներկայացուցիչներով չրջապատած էին Գեր. Աղարեան Պատրիարքի կրտսեր եղբօր՝ Վսեմ. Ժօզէֆ էֆ.ի դագաղը: Հայ Ազգը շատ կը պարտի Աղարեան մեծանուն Գերդաստանին, որ իր օրհնեալ ծոցէն արտադրած հանճարեղ զաւակներով մեծ պատիւ ու փառք բերած է վերաբերած Ազգին ու երկրին:

«Հանրագիտակ» իր ցաւակցութիւնները կը յայտնէ Աղարեան Գեր. Ս. Հօր և Աղարեան ողբացեալ Գերդաստանին, նա մանաւանդ Վսեմ. Ժօզէֆ էֆ.ի յոյժ ողբացեալ ընտանեաց և զաւակաց:

— Պատր. Փոխանորդ Հայրը, փողը Ուրբ. Տարեգլխի տօնին առթիւ շնորհաւորական այցելութիւններ պիտի տայ մայրաքաղաքիս Ռուս, Յոյն, Սերպ, Պուլխար և Սև Լեռան ներկայացուցիչներուն:

— Մալիէյի կողմէ 30000 զրգ. խրկուեցաւ Պատրիարքարան, գաւառներու հայ կարօտեալներուն բաշխուելու համար:

— Դաւրէթի առաջնորդ Տ. Սահակ եպիս. Այվազեան 300 թումանի չափ գումար մը հանգանակած է Ուրմիայի և Սալմաստի սովեալներուն համար:

— Շուշի քաղքին բնակիչներէն Պ. Թադէոս Թաւրեանց 10000 լուպի նուիրեց Դաւրէթի Աղամեան ուսումնարանին, որպէս զի այդ դրամով գիւղ մը գնուի ու անոր արդիւնքով որդեգիրներ պահուին յիշեալ ուսումնարանին մէջ:

— Ուրախութեամբ կ'իմանանք թէ Սամաթիոյ Աղքատախնամին ի նպաստ տրուած թատերական ներկայացումէն 120 ոսկիէն աւելի հասոյթ գոյացած է:

Նոյնպէս կ'իմանանք թէ Ազն. Գրիգոր էֆէնտի Գարակէօզեան 10 օսմ. ոսկի նուիրած է վերոյիշեալ Աղքատախնամին:

Կը լսենք նաև թէ յիշեալ Աղքատախնամի մեծոյրագ ասե՛նապետ Գրիգոր էֆ. Թօփուզեան մտադիր է եղբի իր այդ պաշտօնէն հրաժարիլ՝ իր գործակից Գ. Օփաճըզեանէֆ. և առանձին թողլով, որ նոյնչափ արդիւնաւոր կերպով իր աշխատութեան բաժինը կը նուիրէ միշտ Սամաթիոյ Աղքատախնամին:

Գոհութեամբ կը զեկուցանենք թէ Մ. էֆ. Գալէնտէր Կէտիկ-Փաշայի Ամերիկեան վարժարանին մէջ, Զեագիտութեան դասընթացք մը հաստատած է երկու տարուան տեւողութեամբ, ըստ խնդրանաց նոյն հիմնարկութեան խնամակալութիւններուն:

Դասաւանդութիւնը պիտի սկսի յառաջիկայ Յունվար 1426 հինգշաբթի կէս օրէ վերջ, և շաբաթը մէկ անգամ միայն անգլի պիտի ունենայ:

Պոյն դասընթացքը թէ՛ ներքին և թէ՛ արտաքին աշակերտութիւններու համար ըլլալով, այս վերջիններուն ամսավճարն է 20 զրուշ կանխիկ: Ուստի այն Տիկիներն ու Օրիորդները որ կը փափաքին ոյն առիթէն օգտուիլ, կրնան այժմէն դիմել յիշեալ վարժարանի խնամակալութիւն՝ Միս Զօնտի, և արձանագրել տալ իրենց անունները:

ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԽՆԴԻՐ ԻԳ.

Եռանկիւնաձև շարուած 12 կարգ ընկոյզներ իրարու վրայ դիզուած են, այնպէս որ խարիսխին մէկ կողմը 12 ընկոյզ, անոր վրայ դարձեալ եռանկիւնաձև՝ մէկ կողմը 11 ընկոյզ, այսպէս մէյմէկ պակասած, ամենէն վրան 1 ընկոյզ:

Կամ սւրիշ կերպ ըսելով,

Տարբերական յառաջատուութեան կարգ մը փոքրագոյնը 1, երկրորդ եզրը 3, երրորդ եզրը 6, այսպէս տարբերութիւնը ո՛չ թէ հաստատուն՝ այլ մէյմէկ պիտի աւելնայ, եզերաց թիւն է 12 ընդ ամէնը քանի՞ ընկոյզ է:

Պատասխանն է 364. մեր պահանջածը տարազն է:

ԼՈՒԽՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՒ

ԺԺ. Խնդիրը՝ որով կը հարցուէր թէ 1825 Հոկտ. 31ը ի՞նչ օր էր, լուծեր է Օր. Զապէլ Եազըճեան, Ա.յարն. Պատ. Շաբաթ էր:

* * *

Ի. Խնդիրը՝ որով իմ և բարեկամիս տարիքը կը հարցուէր, լուծեր են,

Օր. Բերուզ Օհանեան, սւսանողուհի Ամերիկեան Վարժարանին Զմիւռնիոյ:

Օր. Փայլածու Տումանեան, աշակերտուհի Հայուհեաց վարժարանին Ատաբաղար:

Պ.Ե. Երուսնդ Մ. Տէօյլեճեան, աշակերտ Վիեննական Վարժարանին Ի Բանկալթի:

Գ. Էօլմէզեան, Ադշէհիր:

Ա. Մատթէոսեան, Նիկովիդիա:

Դ. Սարգիսեան, Տնօրէն՝ երկսեռ վարժարանին Նիկովիդիոյ:

Աղեքսանդր Կ. Աճէմեան, Հալէպ:

Պատիւս. — Իմ տարիքս է 54 տարի 8 ամիս. բարեկամինս 41:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Իզմիտ. (Գործակալ) — Նոր բաժանորդի թերթերը այս թղթատարով ղըրկուեցան, ինչպէս և թիւ 12 թերթը:

Արմաշ. — Տ. վրդ. — Շնորհակալութիւն ձեր համակրանաց. կը հրատարակուի մօտաւորապէս:

Կէլիպօլու. (Գործակալ) — Հարցումին մօտաւորապէս պատասխանը կը արուի. յանձնարարութիւննիդ կատարուած է, միայն թէ 30 փրյ. կարծածնիդ 40 փր. է:

Հալէպ. Կ. Կարիկեան չֆ. — Նամակնիդ ստացած ենք շնորհակալութեամբ. բաժանորդ արձանագրած ենք, յանձնարարութիւններն ալ կատարած:

Կէյլէ — Ազհիսար. — Գաբրիէլ էֆ. — Թերթերը կը ղրկենք Ձեր նամակին համաձայն:

Ատաբաղար. — Գ. Սարայտարեան էֆ. — Ստացած ենք համակրալիր նամակնիդ. մօտաւորապէս:

Իզմիր. — Օր. Զ. — Պիտի ջանանք կարգադրութիւն մ'ընել:

Հալէպ. — Ս. Պօղիկեան էֆ. — Նամակ ղրկեցինք. պատասխանին կ'սպասենք:

Սիլիվրի. (Գործակալ) — Նամակ ղըրկած էինք, ձեռքերնիդ հասաւ: Ձեր գրութեանց կ'սպասենք:

ԳԲՊԱՆԻ ԲՈՒՇԱՏԵՏՐ-ՕՐԱՅՈՅՑ

1899 ՏԱՐԻՈՅ

Հրատարակուած է Զ. Թորոսեան է-
ֆէնաիի հեղինակած Գրպանի Յուշտու-
ար-Օրացոյցը, որ բացի պարզ Օրացոյ-
ցէ, իր մէջ կը պարունակէ կարգ մը օգ-
տակար գիտելիքներ, առօրեայ կեանքի
մէջ անմիջական պէտքերու զօհացում
տալու ամէն կարգի գործի տէր մար-
դոց համար:

Կը գտնուի Կալաթա վրայր և Ընկ.
Թղթավաճառանոցը, և Պոլիս հայ գրա-
վաճառներուն քով, ինչպէս նաև իր կեդ-
րոնատեղին Վալիաէ խան: Նոյնպէս և
Հանրագիտակի խմբագրատունը:

Գին՝ ընտիր լաթակազմ 2ուկէս զրուշ
—նոյնը սոկեզօծ ճզտանով. 5 զրուշ,
կաշեկազմ ճզտանով 7ուկէս զրուշ—նոյ-
նը ընտիր թղթով 12ուկէս զրուշ—փը-
ղոսկրէ կողքով 20 զրուշ:—Շատ գնող-
ներուն մեծ զեղջ:—Նախորդ տարիներ-
ունը կը ծախուի հատը 40 փարայ:

ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՑ

1899 Տարւոյ

Սեպհահանութիւն Ս. Փրկչի Ազգ. Հիւանդ-
դանոցի

Գին 2 ԴՐՈՒՇ

Կեդրոնատեղին է Ազգ. Հիւանդանոցի
Գրասենեակը Կ. Պոլիս Մեծ-Նոր Խան մի-
ջին յարկ թիւ 48-50



ԲԱՆԱՍԷՐՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Հ. Ս. Տէրփիշեանի ՀՆՏԵՐՈՊԱԿԱՆ
ՆԱԽԱԼԵԶՈՒ անուն գրքինու ԼԵԶՈՒ հան-
դէսին ամբողջական հաւաքածոյին պէտք
ունեցող բանասէրներն ու գրասէրները
կրնան խմբագրութեանս դիմել: Աւե-
լորդ է հոս առաջ բերել այդ երկու հե-
ղինակութեանց արժէքը. ամէն բանա-
սէրի ու գրահմուտի համար անհրաժեշտ
գործեր են:

Գինները խիստ դիւրամատչելի են.
փութացէ՛ք առիթէն օգտուիլ մինչև մէկ
ամիս, որովհետև օրինակները սպառած
են:

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

Ի դիմաց ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ Կոտորագրէ մի
միայն Տնօրէն-Խմբագրատես Դ. ԲՈՒԱՏ,
որու ղեկել պէտք է, առանց բացառութեան,
թերթին վերաբերեալ ամէն գործառնու-
թեանց համար:

در علیہ دہ ہفتہ قوسندہ اسکی ضبطیہ دہ
۱۹ نومروی دکاندہ «مجموعہ علوم» غزنوی
سر محرری (بولاد) اقدیہ

Դ. Բոլատ Տնօրէն-Խմբագրատես
«ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ»

19. Էսկի-Ձապթիյէ, Պաղչէ-Գափու
Սթամբուլ

H. Polad Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK",

19. Rue Eski-Zabtié Bahdjé-Kapou. 19
Stamboul

ԱՐՏՈՆԱՏԷՐ Ա. ԼՈՒՍԷՆԷԱՆ



ՀԱՃՈՅՔ ՄԸ

ՈՐ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՏՃԱՌԻՆ

Ճշմարիտ հաճոյքն այն է որ, ախորժելի ժամանց մը ընծայելով հանդերձ, առողջութեան ալ մեծապէս կ'օգնէ: Ներկայ դարուս մէջ հաճոյքի նիւթերը բազմաթիւ են. սակայն զարգացած ազգեր ամենէն աւելի թիջին նախապատուութիւն կուտան, անոր համար որ, այս թանկագին ըմպելին ամենածանր յոգնութիւնները շուտով կ'անցնէ և նոր կորով կը ներշնչէ, մարդուս ձգած աշխատութիւնը վերականգնուի: Ձմեռը արիւնը տաքցնելով, մարմինը ցուրտին դէմ կը պաշտպանէ՝ ամառն ալ զովութիւն ընծայելով, շատ մը հիւանդութեանց առաջը կ'առնէ: Խնամով պատմրտուած գաւաթ մը թէյը, նոյնչափ մսի ջուրի հաւասար սնունդ կը պարունակէ և իր անբաղդատելի ածնութեամբ կատարեալ նախախնամութիւն ունի է մարդկութեան համար: Սակայն աւաղ որ թիջ անուամբ ծախուածներու մեծագոյն մասը խարդախուած ըլլալով, զուրկ են այս առաւելութիւններէն և զանոնք ճանչնալն շատ դժուար է, ուստի անոնք որ կը փափաքին ԸՆՏԻՐ ԱՆԽԱՐԴԱՆ և միևնոյն ատեն ԱժԱՆ Թէյ խմել, պէտք է ԿՀ ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿԵՐՑ Թէյերը գործածեն. ուշադրութեամբ իրենտուելով անոնց անունն ու մասնանիչը տուփերու վրայ: Որովհետեւ թէյի այս մեծ վաճառատուն, իւր երկարամեայ փորձառութեամբ, արեւելեան երկիրներէ մեծաքանակ թէյ որոտածելուն և հազարն ապրանքներ ազատելուն շնորհիւ, միշտ անխարդախ թէյ կը ծախէ ԱՆՄՐՑԵԼԻ գիներով: Ընկերութեան Կեդրամատեպին է Կ. Պօլիս, ձէլալ Պէյ խտն, թիւ 10:

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ Կը ծանուցանէ թէ Մանկավարժական Գերականութեան Գ. մասը տպագրութեան յանձնուած է:

Մայսթերսչաֆթ Սիսթէմի Գաղղիերէն մասի ԺԱ. տետրը հրատարակուած է և բաժանորդագրութիւնը փակուած է:

Գին 12 տետրերու 25 դրուշ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոչոյ եւ Գաւառաց համար

Հանրագիտակ տարեկան 50 դր.

» Վայելչազարդութեան

բաժինով 80 »

Հանրագիտակ միայն Վայելչազարդութեան բաժինն

60 »

Հանրագիտակ Վայելչազարդութեան

բաժին գունաւոր եւ մեծադիր

36 պատկերներով 110 »

Արտասահմանի համար

Հանրագիտակ տարեկան 15 ֆր.

» Վայելչազարդութեան

բաժինով 20 »

Հանրագիտակ միայն Վայելչազարդութեան բաժին

16 »

Հանրագիտակ Վայելչազարդութեան

բաժին գունաւոր եւ մեծադիր

36 պատկերներով 25 »

ՀԱՒԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՐ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ
ՎԱՅԵԼՉԱԶԱՐԴՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆԻՆ

2. ԲՈԼԱՏ

Խմբագրապէս Հանրագիտակ Հանդեսի

Թիւ 19 Եսկի-Չապիէ

Կ. Պոլիս

Տէ՛ր.

Գնահատելով Ձեր հանրօգուտ ձեռնարկը, հաճեցէք զիս բաժանորդ տրամանագրել թերթիդ վայելչազարդութեան բաժինն և

Ստորագրութիւն
(Ընթերցիչ)

1898

Բնակութեան տեղ

Հասցէ

Ա Ձ Դ

ՄԵՍ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՈՐԷԻՑ

Լ. ԱՐՄԼԱՆԾԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐՁԷ

Կ. ՊՈԼԻՍ, ՖԵՏԻԼԵԱՆ ԽԱՆԻ ՏԱԿ ԹԻԻ

Սոյն վաճառատուն պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ՝ ամեն տեսակ թարմ դեղորայք. վիրաբուժական գործիքներ. Անգղիական և Գաղղ. պատրաստ դեղեր, գօնեակներ, գինիներ և հանքային ջուրերու մեծ մթերք մը, յարմար գներով և Ս. Արսլանեան և Ս. Էմիրզէ Բնկերութիւնը երկարատեւ անձնական փորձառութիւններուն և Ամեն ջանք և աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն գոհացրելու համար, մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք գաւառաց համար, որոնց

կը զրկեն դեղորայք, ամենայն արագութեամբ, թարմ և մատչելի գներով:

Շատեր այնպէս կը հաւատան թէ Պոլսոյ հրապարակին վրայ ՃՇՄԱՐԻՏ և ԱՆԽԱՐԴԱԽ Մօռիւ ձկան իւղ չի գտնուիր. այս կարծիքը շատ սխալ է. պէտք ունեցողները թող դիմեն Լ. Արսլանեան և Ս. Էմիրզէ Տեարց Դեղորէից վաճառատունը, Ֆրնտգլեան Խանի տակ Թիւ 3, ուր պիտի գտնեն ուղղակի Նորվէկիայէն բերել տրուած ամենալաւիկ ձկան իւղի տեսակներ. Մեծաքանակ եւ փոքրաքանակ վաճառումներ կ'ըլլան խիստ գիւրամատչելի գներով:



ԳՈՐԾԱԿԱԼՔ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Ասա-բազար — Ստեփան էֆ. Սափրիչեան
Արաբկիր — Գ. Տէվէճեան էֆ.
Էրզրում — Եղ. էֆ. Տ. Ազարեան
Թեհրան — Կարապետ էֆ. Բաբարեան
Իզմիր — Կարապետ էֆ. Մալէճանեան
Իզմիս — Աբրահամ էֆ. Կ. Կտաճեան
Մալխարա — Վ. Մանուկ էֆ. Չօլաքեան
Խարբերդ — Խոսրով էֆ. Քէչիչեան
Թրեպոն — Գալուստ էֆ. Գըլլճեան
Սինոպ — Յ. էֆ. Պետրոսեան

Կիրասուն. — Արմենակ էֆ. Սօմունճեան
Մարաշ — Արժ. Տ. Յովհաննէս քահանայ
Վարժապետեան
Մանչեսթր. — Յակոբ էֆ. Բոլատեան
Պանսրմա. — Արմենակ էֆ. Ս. Մսերեան
Սրվազ. — Յ. էֆ. Գարակէօյեան
Տրապզոն. — Սահակ էֆ. Էթմէքճեան
Կեիկպօլու — Յովսէփ էֆ. Տէր-Յովսէփեան
Մանիսա. — Մկրտիչ էֆ. Էրկանեան
Աֆիոն-Գարա-Հիսար. — Արտաշէս էֆ. Հալէպեան

Հանրագիտակ կը ծախուի ամեն լրագրավաճառաց քով, մասնաւորաբար

Մաղրի-Դիւղ, Պօղոս էֆ. Ազնաւորեանի խանութը,
Դատը-Գիւղ, Լեւոն էֆ. Չպուքճեան Դեղարանը,
Բերա, Դեմ փողոց Գառնիկ էֆ. Կիւլէրեանի խանութը: